դժվար չէ կռահել, որ այդ տարիներին Արարատյան երկրի Ախուրյանից դեպի արևմուտք ընկած շրջանները նույնպես գտնվել են Երևանում նստող ամիրի կամ հաքիմի իշխանության ներքո։ Կարսը, Զարիշատը, Մաղասբերդը, Բայազետը, Մակուն և Կաղզվանը, որոնք հաճախ, որպես օլքա տրվում էին Սա՛դլու, Զրմշկաձագլու, Բայաթ, Դունբուլի և այլ կըզըլբաշ ու քուրդ, սուլթան հորջորջվող առաջնորդների, ենթարկվում էին Զուխուր-Սա՛դի բեկլարբեկիին։

Այս տարիների Արարատյան երկրի կըզըլբաշ տիրակալների վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան։ Հայտնի է, սակայն, որ 1549 թ. Էրզրումի Իսքանդար փաշայի՝ դեպի Երևան կատարած արշավանքների ժամանակ Երևանի հաքիմն էր Հուսեյն-ջան սուլթան Ռումլուն, որը խուսափում է թուրքերի հետ ընդհարվելուց։ Իսքանդար փաշայի զորքերն անարգել մտնում են Երևան, այրում ու կողոպտում շուկան և ետ վերադառնում[17]։ Այս վկայությունը միաժամանակ հաստատում է, որ 1527 թ. Շարուրի ճակատամարտից հետո ևս երկու տասնամյակ Արարատյան երկրում իշխել են ռումլուները։

Շահ Թահմասպը ի պատասխան Իսքանդար փաշայի դեպի Երևան, իսկ նրանից առաջ նաև դեպի Խոյ կատարած արշավանքների, 1552 թ. մեծ բանակով նորից է ասպատակում Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ շրջանները[18]։ Այս արշավանքների և հայ ժողովրդի համար նրանց աղետալի հետևանքների մանրամասն նկարագիրը տրված է Թադեոս Սեբաստացու հիշատակարանում[19]։

Նույն դեպքերի մասին Իսքանդար Մունշու տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ հավանաբար 1549 թ. իրադարձություններից հետո, շահ Թահմասպը Հուսեյն-ջան սուլթանից վերցրել է Զուխուր-Սա՛դի բեկլարբեկությունը և տվել Շահկուլի սուլթան Ուսթաջլուին։ 1552 թ. շահ Թահմասպի հրահանգով դեպի Էրզրում կազմակերպված արշավանքին մասնակցող ամիրների շարքում Մունշին հիշում է նաև Շահկուլի սուլթանին, ավելացնելով նաև, որ նա այդ ժամանակ իշխում էր Զուխուր-Սա՛դում[20]։

Շահկուլի սուլթան Ուսթաջլուն շահ Թահմասպի խելացի և սիրված զորավարներից էր և մեծ վստահություն էր վայելում արքունիքում։ Իսքանդար Մունշու պատմության երևելի անձանց ցուցակում նա ևս դասված է այն հռչակավոր ամիրների շարքը, որոնք «ընդարձակ օլքաներ ունեին։ Նրանց շնորհված էր նաև լավագույն թիուններ, ունեին բանակ, թմբուկ և դրոշակ»[21]։

---

17 Հասան-բեկ Ռումլու, էջ 341։ Իսքանդար Մունշին օգտվելով Հասան-բեկ Ռումլուից, վերապատմում է այս դեպքերը, սակայն Երևանի հաքիմին անվանում է Հուսեյն-խան սուլթան. թվում է, թե ավելի հավաստի պետք է համարել Հասան-բեկին, որը դեպքերի ժամանակակիցն է և մասնակիցը։ Մունշիի «Հուսեյն-խանը» հավանաբար գրչի սխալ է ج-ի և چ-ի շփոթում, պարզապես կետը սխալ է դրված եղել։ Դա հաստատվում է նաև, այն փաստով, որ եթե մեկին արդեն տրված էր «խան» տիտղոսը, այլևս ավելի ցածր «սուլթան» տիտղոսի հիշատակումը անտեղի է։ Հետևաբար Երևանի Ռումլու տիրակալի անունը ոչ թե Հուսեյն է եղել, այլ Հուսեյն-ջան։

18 Հասան-բեկ Ռումլու, էջ 328, 338, 341։

19 Տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. III, Վենետիկ, 1786, էջ 514—515։

20 Իսքանդար Մունշի, հ. I, էջ 76։

21 Նույն տեղում։